## ԻՄԱՍՏՈՒՆ ՄՐՋՅՈՒՆԸ



Արքան բարկանում է մրջյունի վրա:

– Մրջյունին գցե՛ք ապակե անոթի մեջ ու մեկ հատիկ ցորեն դրե՛ք հետը, – հրամայում է նա:

Մեկ տարի անց արքան հիշում է բանտարկված մրջյունին: Մրջյունին բերում են նրա մոտ:



– Մրջյու՛ն, խոստովանում եմ, շատ եմ զարմացած, – ասում է արքան: – Այդ ինչպե՞ս է, որ մի ամբողջ տարի մեկ հատիկ ցորենի կեսն ես կերել միայն:

– Ես մտածեցի, թե քո բարկությունը կարող է երկու տարի ձգվել, դրա համար էլ հատիկի կեսը կերա, կեսը պահեցի:

**Ջ**

Ջարթուցիչի զվարթ զանգը
Ջիլ զնգզնգաց,
Ջարթուցիչի զիլ զնգոցից
Ջորին զարթնեց զայրացած:

**Մ**

Մռռանը մտավ մառանը.
Մուկն էլ մտավ մառանը.
Միասին մաքրեցին մառանը.
Մնաց միայն մռռանը: